ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա/Ձ Հասմիկ Օհանյան-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	EN Certified Biological Safety Cabinet	Biobase	BSC-1500IIA2-Pro Special order customized	Biobase, Biovictor, CO., LTD	1.Պահարանը պատկանում է II դասին, A2 տիպին։ 2.Աշխատանքային խցիկի լայնությունը 1500 մմ։ 3.Աշխատանքային խցիկի բարձրությունը 2160 մմ (Size(W*D*H) 1500*760*2160 mm)և ապահովի ինվերտացված միկրոսկոպի տեղադրման և շահագործման հնարավորություն։ 4.Պահարանի կառուցվածքը ապահովում է օպերատորի, նմուշի և շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ II դասի A2 տիպի պահարանի նշանակությանը

						համապատասխան կենսաբանական նյութերի հետ աշխատանքի ընթացքում: 5.Պահարանը ունի միկրոպրոցեսորային կառավարման համակարգ՝ ցուցադրման էկրանով: 6.Ապահովում է օդային հոսքերի պարամետրերի իրական ժամանակի մոնիթորինգ, ինչպես նաև ձայնային ազդանշանային համակարգ՝ աշխատանքային պարամետրերի թույլատրելի սահմաններից շեղման դեպքում: 7.Առջևի պատուհանը (sash) ապահովում է անվտանգ ֆիքսացիա աշխատանքային դիրքում, պաշտպանիչ փակման հնարավորություն և մաքրման ու սպասարկման համար հասանելիություն: 8.Պահարանը համապատասխանում է EN 12469:2000 ստանդարտին կամ դրա գործող խմբագրությանը: 9.Աշխատանքային գոտու օդի մաքրությունը համապատասխանում է ISO Class 5 մաքրության դասին՝ ըստ EN ISO 14644-1: 10.Ֆիլտրացիոն համակարգը ներառում է ULPA դասի ֆիլտրեր 99.9995% արդյունավետությամբ:

						11.Մուտքային օդի միջին արագությունը 0.53±0.025 մ/վ է: 12.Նվազող լամինար օդային հոսքի միջին արագությունը համապատասխանում է արտադրողի կողմից II դասի A2 տիպի պահարանի համար հայտարարված նոմինալ արժեքներին և հաստատվի գործարանային փորձարկումներով/սերտիֆիկացմամբ: 13.Պահարանի աերոդինամիկական սխեման համապատասխանում է A2 տիպի կառուցվածքին, այսինքն՝ ապահովում է 30% արտածվող և 70% ռեցիրկուլացվող օդ: 14.Պահարանը նախատեսված է շահագործման համար առանց արտաքին արտածման օդափոխության համակարգին պարտադիր միացման: 15.Աշխատանքային խցիկը, աշխատանքային մակերեսը և աշխատանքային գոտու հետ շփվող ներքին տարրերը պատրաստված են 304 տեսակի չժանգոտվող պողպատից: 16.Աշխատանքային մակերեսի լուսավորվածությունը 1000 լյուքս է: 17.Աշխատանքային

						գոտու ներսում պետք է նախատեսված լինի առնվազն երկու ներկառուցված օժանդակ էլեկտրական վարդակ: 18.Էլեկտրասնուցումը՝ 220–240 Վ, 50/60 Հց: 19.Մատակարարման փաթեթում պետք է ներառված լինի բարձրությամբ կարգավորվող ստենդ: 20.Պահարանը ապահովում է մաքրման, ախտահանման և տեխնիկական սպասարկման հարմարավետություն: 21. Ուլտրամանուշակագույն լամպ ունի: Ինչպես նաև դրա հետ առկա է անվտանգ միջբլոկավորում, որը կբացառի աշխատանքի հնարավորությունը բաց առջևի պատուհանի դեպքում կամ օպերատորի աշխատանքային ռեժիմում: 22.Արտադրողը ունի ներդրված ISO 9001 որակի կառավարման համակարգ: Առկա է ISO 14001 և ISO 13485 սերտիֆիկատներ: 23.Առաջարկի մեջ պետք է ներառված լինեն սարքավորման առաքումը, տեղադրումը, շահագործման հանձնումը, աշխատունակության ստուգումը/թեստավորումը:

					24.Առաջարկի մեջ ներառված է անձնակազմի ուսուցումը սարքավորման հետ աշխատանքի վերաբերյալ, եթե տվյալ տեսակի սարքավորման համար այդ ծառայությունները կիրառելի են: 25.Երաշխիքային ժամկետը 12 ամիս: Պետք է ապահովված լինի հետերաշխիքային սպասարկման հնարավորություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АСМИК ОГАНЯН ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					